


ԲՍԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոչիտիոյ համար	12 Տր
Տարեկան վեցամսեայ	6 "
Արտասահմանի վեցամսեայ համար տարեկան	8 "
15 "	

Սահեկայի համար	3 Տր
Տարեկան վեցամսեայ	1.50 "

Իսկուցման տողը ստանալիս երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսին համար 20 ս. անոթի կ. երեք երեսունի անգամ կրկնու համար 20 ՕՍ գեղը կրկնայ :

Վանայի համար ձեռքի 10 սանթիմ



ԼՐԱԳԻՐ ԱՉԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ  
ԿԸ ՀՐԱՏԱՐԱՅՈՒԹԻ ԶՈՐԵՔՆԱԲԹԻ ԵՒ ՇՆԱՐԱԹ ՕՐԵՐԸ

Նախկին և նոր զրկեցիկ հայկազգիական հասցիներ :

Редакция на вѣстникъ «Шаржумъ» Варна

Redaction du journal «Charjoun» Bulgarie  
Méchitharistengasse  
Vienne

Վեհապետի համար  
ձեռքի ( 20 ՍԱՆԹԻՄ )  
Պոչիտիոյ համար ձեռքի

15 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք ևս չեն տրուիր

«ՇՆԱՐԱԹ»-Ի ԲՍԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ԲՍԺԱՆՆԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԿԱՆՈՒԿՎԱԾԱՐԸ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԲՍԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ

— 0 —

Մենք արդէն ձեզ դրկած ենք տրուած նամակներ, Ձեր բաժնեկիցները կրնաք ուղարկել կամ մեզի կամ «Հայրենիքի» խմբագրութեան : Ձեր վճարողներուն անունները պիտի հրատարակուին թէ՛ «Շարժում»-ի և թէ՛ «Հայրենիք»-ի մէջ :

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Պոչիտի մէջ մեր բաժնեկիցներէն պ. Գրիգոր Մաքսանեան, որ անգիտակցաբար չէր վճարած իւր պարտքը, խոստին բացատրութեանց մէջ մտաւ ու փութաց իր հին պարտքը վճարել :

ԽՆԿԱՐՈՒՄԻՆ

ՃՈՂՈՎՈՒՐԿԸ ԵՒ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ

Երոպական թերթերը հազարէնցին որ թուրքիոյ մի քանի հայաբնակ քաղաքներ ու գաւառներ պաշարման վիճակի մէջ են գրկած, որովհետեւ կառավարութիւնը վախճում է որ Հայերը ապստամբեն :

Լսում է՞ք. թուրք կառավարութիւնը վախճում է որ հայերը բազմութեամբ կը ապստամբեն ոչ միայն Անթիպոլսում և Սասունում, այլև զաշտային տեղերում: Սա մի նորութիւն է. ու այդ նորութեան մէջ կայ բաւական դրական իրողութիւն :

Երկրից եկած տեղեկութիւնները հաստատում են որ ծածկատանի մէջ գտնված հայութեան մի ստուար մասը այլևս եկել է այն եզրակացութեան ու համոզումին որ իր կեանքը և փրկութիւնը կայանում է զէնքով դիմադրելու մէջ. ու բացի իրենից ոչ ոք կարող է իր ծով ցաւերին, որոնք ստրկութեան արդիւնք են, դարման տանել :

Ուրեմն անուրբ կեանքի պահանջները ստիպումով արիւնթաթախ և միշտ տանջանքի մէջ տառաջող հայ ժողովուրդը եկել է միակ և փրկարար ելքակացութեան ու փոխանակ ահա՛նք կախելու արտահասմանում ճոռոմարանող շարժման և թրքացած կողմից ճոռոմարաններին, միջոց է փնտրում իր դիմադրութիւնը յաղթանակի վերածելու : Կարծում ենք ժամանակ է որ մեր գործիչներն էլ, էթէ իսկապէս յեղափոխական գործիչներ են, ահա՛նք չը կախեն արտասահմանեան կոկոսներին ու ճառանց ժամաւաճառ լինելու. անշահ ինչ գիտնելի համար, որոնք ստեղծվում են անգործ ու վախկոտ մարդկանց ճիգերով, իրենց խելք ու միտքը դարձնեն դէպի երկիրը, դէպի հայ ժողովրդի կողմը, որը արդէն սկսել է գործիչներին ու վարիչներին յեղափոխութեան գտեր տալ և նրանց տեղերը մատնանշել կուրի ապստամբում :

Գործելու գործը երկրում պէտք է լինի. միութեան փոփոխող իր զէնքով պէտք է միանայ երկրում կառուցողներին հետ : Միութեան բանակցութիւնները պէտք է տեղի ունենան երկրի մէջ, ոչ արտասահման, ուր տիրում են գրիչը, խօսքը և ազտութիւններ :

ՎՐԻՑ

ԱՐԻԹԻՆՔԸ

«Ապրո»-ին գրածին ստորի

Յիլիպէի գործերուն մասին իմ լուսթիւնն ստիպել է պ. «Ապրո»-ն, որ «Շարժում»-ի մէջ երբեմն կը գրէ, առանց սակայն մոռնալու ստալին պատահութիւնով խայծ մըն ալ ինծի բաժին հանել :

Կուրիմ երկու խօսքով ըսել թէ՛ ի՞նչ կը մտածեմ առ մտտին : Ամեն անգամ որ փորձուած եմ մեր տեղական այս կամ այն խն

դիրին վրայ «խորհրդածութիւն» մը ընել, ամեն անգամ ալ ինքնիրենս հարցուցած եմ— Արդի՞նքը . . .

Ու ահարցումս բնական է մէկէ աւելի իրաւացի պատճառներով : Աչքերնուս առջևն է Պուլկարահայ գաղութը : Պուլկարիոյ մէջ ունինք աննկ հասարակութիւն մը, որ անտարբեր է դէպի թերթերը. շատ շատ անոր փնտաւը լուրերու բաժինն է . . .

Իրողութիւնը ան է որ, մեր թերթերը պահանջուած չափով ընթերցողներ չունենալուն, Ամերիկահայ թերթերուն պէս հանրային կարծիքին վրայ չեն ազդեր, և կամ չիկայ մեր մէջ հանրային կարծիք մը որ ազդուի մեր թերթերէն :

Եթէ մեր սակաւաթիւ թերթ կարգացողները դասերու բաժնեկից, կուրենանք. առ առաւել ենք գտեր : Աստիճան մէկը կը կարգալ թերթերը ամենայն «անտարբերութեամբ», սուտ կամ իրաւ : Գրուածը կարգացած վայրկեանին միտքն է, վաղը արդէն անոր վրայ անգամ չի մտածեր :

Արդէն կը մնայ երկու որոշ տարբ. մէկը— որ գիտէ իրաբանչիւր թերթի արժէքը և մաքուր բաներէ կախորժի. ասի գիտակից, լաւ տարրն է : Միւսը որ գիտակցաբար մնաւութիւններ կը ստեղծէ, կամ մնաւութիւններէ կախորժի, ամեն մէկ ճշմարիտ խօսք, լաւ գործ իր մատին փաթթոց ընելու միջոցներ ու առիթներ կը փնտռէ. աս ալ գիտակցաբար ազտութիւններ ընող կամ սիրող Քրասակար տարրն է :

Այս վերջինները «ընդարձակ տեղ ունին «Եկեղեցի»-ներու ՀԱՅ-ԹՈՒՐԻԹԻ թերթերուն մէջ— եթէ ներքին է թերթը բառը գործածել—, որոնց ամեն մէկ արտադրութիւններուն վրայ առաջինները կը «թքեն» ու կանցնին : Մասնաւորեմ խօսքս Յիլիպէի

վրայ : Յիլիպէի գործերուն վրայ «Շարժում»-ի մէջ գրուած կամ գրուելիք իրողութիւններուն մեծ մասը անձանթ չէ Յիլիպէցիներուն. իսկ գիտենք թէ այդ ճշմարտութիւնները ի՞նչ կը լլան ազտութիւններու բերնին մէջ, երբ մանաւանդ անոնց վրայ գրելով ազտութիւնները բանալու առիթն ալ տուած ըլլաւ :

Աչքերնուս առջևն է Յիլիպէի գործերուն բովանդակ հեռաւոր կամ մտատուր անցեալը : Որքա՞ն գրուած է, որքա՞ն գծուած է,— իսկ արդի՞նքը . . .

Փորձերը եկան հետզհետէ հաստատելու բացարձակ ճշմարտութիւն մը, թէ՛ խօսքէն առաջ գործն է որ պէտք է, և ան է որ աւելի կազդէ մեր հասարակութեան վրայ :

Կը յուսայի՞ք թէ՛ առանց դրական քայլի. միշտ գրելով, Յիլիպէի կրթական գործը իր ներկայ խաղաղ և բաւական արդիւնալից փուլին մէջ մտնէր :

Կը յուսայի՞ք թէ՛ մութին մէջ թաղուած վատութեան մը, մատնութեան մը վրայ տասն անգամ, քսան անգամ գրելով կարելի պիտի ըլլար միամիտներուն խաւերը թափանձել, անոնց աչքը բանալ այնքան որքան աս վերջին ամիսներու մէջ գործուած փոփոխութեան խաղաղ ՄԱՏՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ կը ցան, որոնք, որքան դիմացիներուն տեղաբնակները վատութիւնը ցոյց տուին, նոյնքան և աւելի ցնցեցին ամենէն անտարբերներն անգամ : Ի՞նչ գրուեցաւ անոնց վրայ— գրեթէ ոչինչ : գրուածները նախագիծ մը անգամ չէ :

Ահա՛ Յիլիպէի փոքր մաքուր, եռանդուն երիտասարդութիւնը, իր լաւ գործերով : Անոր աշխատութիւններուն կը պարտի «Գրասիրաց» իր հիմակուան լաւ վիճակը : Անոր ջանքերուն շնորհիւ գոյութիւն ունեցաւ «Երգեցիկ»-Պատերազմը, «Երկուք»-ը և ուրիշ օգտակար խմբեր : Ան է իր գիշերը ցորեկին խառնողը,

վաղվորը, այն ամեն գործերուն համար, որոնցմէ օգուտ մը ունի Թիւրքի հայութիւնը անխորհրդաբար Ինչ եղաւ առ երկտասարդութեան քաջալերանքի բաժինը—

ՍՏՈՐ ՄԱՏՆՈՒԹԻՒՆ մը անոր հասցէին... Եւ սակայն, կը յուսա՞ք թէ դէպքով թղթակցութիւն պիտի կրնար հասարակութեան անկեղծ միամիտ տարրին ա՛յնքան նըպաստել, որքան նպաստեցին օրինակի համար, մէկ-երկու ներկայացում, հաւաքում եւն Պիտի կրնային այնքան ցրուած ուժեր իրար բերել, որոնք—չառ թէ քիչ—բանով մը օգտակար կըլլան. կը կասկած լիմ:

Ու առ ամենուն մէջ, մասնութիւնները չեն ցաւալին: Չէ, ամեն լաւ գործի և գործողներու ճակատագիրը եղած է ատի: Եթէ կայ տիրեցնող պարագայ մը, ան է որ, լաւ կամ գէշ ուղարկութիւնները շատ շուտ կ'անհետանան. կը մոռցուն մեր հասարակութեան և պէտքը կը զգացուի կրկնելու, միշտ կրկնելու:

Եւ հոս է որ մամուլին, անոր մէջ գրելու պէտքը կը չեղանի, և որոնք բարեբար արդիւնք մը կրնային տալ, եթէ թերթ կարգացողները աւելի պիտի ունեցողները ըլլային:

Պ. ՊԱՐՈՒՄ ԻՐ ԱՌԱՋԻՆ ԹՂԹԱԿՈՒԹԻՒՆՈՎ մեզի կը ներկայանայ իբրև «տեղեկութիւններ» միայն տուող, քանի որ կը խոս-

տովանի թէ ոչանց կընէ խորհրդածութիւններ ևւն: Ասի ցոյց կուտայ որ ինք ալ շատ լաւ հասկցեր է թէ իր խորհրդածութիւնները խճճանքներու, նորանոր բարգաւթութիւններու տեղի պիտի տան:

Եւ եթէ ես ուշ ուշ կը գրեմ Թիւրքի գործերուն վրայ, պատճառը ան է որ չեմ ուզեր ոչանց ընել խորհրդածութիւններու և սահմանափակուել «տեղեկատու» գերին մէջ:

Խոստովանելով սակայն պ. ՊԱՐՈՒՄ ԻՐ ԱՌԱՋԻՆ նամակին պարունակութեան բովանդակ ճշմարտութիւնը, ան ալ, սակայն իր սահմանափակ վիճակովը, զերծ չի մնաց գործերու վրայ անկեղծ գուրգուրացողներու օգտակար գիտողութիւններէն:

Ասի դիմումը հոս կը յիշեմ, ցոյց տալու համար որ, դեռ որքա՞ն աւելի սահմանափակ պէտք է եղեր...:

Իսկ իրեն «տեղեկութիւն», եթէ ոչ Թիւրքի, զոնէ միւս քաղաքներու հայութեան համար, իսկապէս կարծէ գրել երբեմն մեր գործերուն վրայ, և ուրախ եմ որ առ պարտականութեան բաժինն ալ ինքնաբերաբար պ. ՊԱՐՈՒՄ ԻՐ ՎՐԱՅ ԿԱՅԷ:

Յաջողութիւն:

ԹՂԹԱԿՈՒՄ Թիւրքի 15 սեպտ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԵՐԱԾԻՆ

ՄԱՍ Բ. 22 ԳԼՈՒԽ Ա.

Հեղինակն մօրից և քրոջից բաժանվելով, առանձնացաւ իր սենեակի մէջ և կրկին սկսեց կարգալ Մաղիկեանի նամակը: Ուրախութիւնից աչքերը կրակին էին տալիս, ձեռքերը դողում էին:

«Ես այստեղ եմ, բայց սիրտս քեզ մօտ է Հեղինէ: Անհոգ կաց. քեզ երբէք չեմ մոռանայ. նախ հայրենիքը, մեր դժբախտ երկիրը, յետոյ դու: Բեզ սիրելով եմ ուզում իմ պարտքը կատարել, համոզված եմ որ իբրև պարտաճանաչ քաղաքացի աւելի սիրելի կը լինեմ քեզ համար...» Այս տողերն էին որ աւելի դուր էին եկել Հեղինէին: Նա շնչաց, հպարտ ծափոր շրթունքներին:

—Այո, սերելի Մաղիկեան, նախ հայրենիքը, յետոյ ես. ուրեմն կրկին միայն ես եմ քո սիրելին. բայց դու ուզում ես պարտաճանաչ քաղաքացի լինել, ես էլ եմ ուզում լինել: Ափսոս որ քեզ հետ ճամբա չընկայ. բայց ոչինչ աւելի լաւ. միայն կը գամ, կը գտնեմ քեզ: Ուզում եմ քեզ մոռցնել տալ ինձ: Ողորմելի մարդիկ, եւ ի՞նչ են տալիս քո փոխա-

րէն ինձ. զգեստներ, զարդեր, հարուստ փեսայ, ճամբորդութիւններ. օր նոր, ծրագրի նոր ինձ զբաղեցնելու, քեզ իմ սրտից, մօքից դուրս կորզելու համար: Եւ այդ բոլորը կատարվում է իմ սպառնալիքներով: Գործիքներ համար: Տարօրինակ արամբանութիւն ունեն ծնողները: զժբախտ սացնում են երջանկացնելու համար...:

Ոչ, ես գիտեմ ինչի՞մէջ է կայանում իմ երջանկութիւնը. եւ ինքս պէտք է կազմակերպեմ այդ երջանկի կիսանքը. կեանքը իմս է, ապրողը ես եմ, ու կպրեմ. ոչ ոչխարի պէս, ոչ բոյսի պէս, ոչ սրա նրա հրամանով ու ընկալումով, երեւակայում եմ, յանկարծ գնամ Մաղիկեանի մօտ. որչա՞փ պէտք է զարմանայ. բոլորովին չի սպասում. վարկս կտրվեց նրա աչքում. երբ այստեղից իրեն հետ չը գնացի. բայց հիմա կը բարձրանայ վարկս. երբ ինքս գնամ...:

Դուռը բացվեց և քոյրը ներս մտնելով ասեց. —Մենակ ես, Հեղինէ, ես էլ կարծեցի թէ մարդ կայ մօտդ, բարձր բարձր էիր խօսում, մի երկրորդին գիմելով:

—Ոչ, քոյրիկ, մենակ չեմ. Մաղիկեանի հետ էի խօսում: Խեղճ կ'ընր չարեց, աչքերով սկը սեց անկիւնները տնողի, կարծես Մաղիկեանին սրտնելով:

Հեղինէն ծիծաղելով շարունակեց. —Ի՞նչ ես փնտռում քոյրիկ, Մաղիկեանին: Նա այստեղ չէ. բայց

ԱԶԳԱՅՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԸՆ-

ԿԵՐՎԱՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

(Թարգմանաբար)

ԻՆՆՈՍԻ ԴԼԵՆՍԻՍԻ

—

(Շար. Անխորհրդի)

Ժողովուրդ մը վաղ կամ ուշ պէտք է օտար սիրապետութեան լուծը թօթափէ. եթէ ոչ երբէք կատարեալ չըլլար:

Մեր առաջ կը տեսնենք զօրեղ ուժերու ներգործութիւնը, որոնք 43-երորդ դարու մէջ ազան շատ ազգային պետութիւններ կողմաւորեցին. կը տեսնենք ազգային կողմէ մէջ յեղափոխականներու՝ այդ ուղղութեամբ թագաւորներու եւ անոնց նախարարներու հետ յաճախ միասին գործելը, թէպէտեւ միաժամանակ միտ ապստամբութիւններով ալ, վերջիններէն, սակայն ես կենալ չիկար իրենց համար: Միացեալ Իտալիան, Գերմանիան, Սերպիան եւն թէպէտ յիշեալ ժողովուրդներուն համար զրախտներ չեն, անոնք մաւաթ այն են՝ ինչ որ ազգային պետութիւններ կանուանենք. սակայն նախկին բեռեկաւոր կտորներու միացումը պատմական անհրաժեշտութիւն մըն էր ու պէտք էր կատարուի, իրր նախապայման աւելի հեռաւոր զարգացման:

Ազգային պետութեան փուլը որեմն որոշ ազգայնութիւններու համար միայն հարկուոր եւ բանաւոր պէտք է ըլլայ. ոմանք իրենց համար ազատ պէտք է վճել կարողանան, մինչդեռ ուրիշներ ստրկաբար օտարին կամբին պարտին ծառայել:

Պատմական անհրաժեշտութիւնները, զարգացման օրէնքները ոմանց

համար միացուցիչ պէտք է ըլլան եւ ուրիշներու համար ոչինչ: Պատմութեան առաջ չը կան կուլտուրական ժողովուրդներ, որոնց ամենակարեւոր զարգացման վիճակը ունէ ճակատագրի միջոցաւ նախապէս ապագայի համար վճուած ըլլալ վիճակուէր:

Ազգի ուժգին բարախող կենսունակութեան մէջ պէտք է որ ընդհանրութեան մէջ մի զրդուրը եւ իւրաքանչիւր անհատի զարգացման ընդունակութիւնները ամենաթեթեւ ու ամենագիւրբին արտայայտութիւնը գտնեն:

Ճիշդ այդպէս է եւ կուլտուրա կոչուածը—վիճակ մը բարեբազոյն աւրուստին եւ սովորական կուլտուրական ցաղափարութեան միջեւ, որը իր մէջ կը բռնէ հազարաւոր նրբացումներ, գեղեցկացումներու եւ կատարելագործումներու ամբողջութիւն մը, որոնք անհատական կեանքի մէջ յաճախ ամեն ինչ կը նշանակեն,—ազգային բնահանուր մասնորականութեամբ ձեռք բերուած են:

Ու իբրեւ պատկազրութիւն ազգային շնչին, ամեն սեղ ազգի կամքը կը գտնենք միջ, զէպի ինքնավճողութիւն, ծաւալում, ազատութիւն:

Լեզուն ժողովրդի հասարակաց գանձը, պէտք է կատարելագործուին եւ զանազանութիւնն է որքան ցցասումի եւ սպասամբութեան որոտին այնքան ալ ամենաքնքուր զգայնութիւնը արտայայտուուն մէջ, ինչպէս կարելի է այսքան ինքնբարձրեան հասկանալի բան մը, օրինակի համար Պրուսական կուլտուրական պետութեան մը մէջ ի կատար սփել, որ ինչպէս ամբողջ զարգացման էութիւնը, գերմանական է, ուր փորթիկները կը պատժեն, եթէ իրենց մայրենի լեզուով հեղինակուած գիրք

էլ քեզնով են զբաղված. բայց դու չեթի վրա ուշադրութիւն չես դարձնում: Ինչքան մայրիկը օրից օր մաշվում է. հա, դիտե՛ս ինչ կայ. ուզում է քեզ Մոսկովա տանի. կերվա՞մ:

—Ի՞նչ, Մոսկովա՞. ինչու չէ. կերվա՞մ. երբ ասեց որ ուզում է Մոսկովա տանի ինձ:

—Ամեն օր էլ ասում է. այսօր է ասեց. ես էլ եմ կայծում լաւ կը լինի. կերվա՞մ, սիրող կը բացվի. նոր ծանօթներ կուեննաս, լաւ թատրոններ կը տեսնես. վերջապէս մայրաքաղաք է. զարճանալու համար հազար ու մի սեղ կան:

—Կերվա՞մ, կերվա՞մ քոյրիկ, այն տեղից էլ Մաղիկեանի մօտ կերվա՞մ, բայց տե՛ս մարդի բան չասես, գաղտնիք եմ տալիս քեզ: Միւսնայն է այստեղից էլ պէտք է գնայի. բայց աւելի լաւ. մայրիկի հետ կերվա՞մ, ճանապարհին կաշխատեմ նրան համոզել, Ու գիտի, երբ միտակ մնա՞ք, կարելի է համոզվի: Դու էլ աշխատիր այստեղ հայրիկին համոզել. հաւատա՞, որ չեմ ուզում ծնողներս սիրտը կտրել. չեմ ուզում առանց նըրանց համաձայնութեան լուրջ քայլ անել. կամք նրանք էլ պէտք է հասկանան որ իմ զգացումներնը զէպի Մաղիկեանը շատ լուրջ են, եւ ես անկարող եմ այդ զգացումներնը գործնական պատճառներով հանար:

(Շարունակելի)

մը ուղին կարող, ուր նոյն իսկ մեր կուսակցութեան շարքերուն մէջ գրանցուողներէն շատեր գերմանացուներն ալ շատ ծանր չեն գտներ, վասնոր լեհացիները գերմանական զորքերուն մասնակից ընել կուզեն...

Միայն զբաժանարարական ընկերութեան մէջ է, որ շատեր իսկապէս պրոլետարիէ կը նկատեն իրենք աւելցուցած մը մեքենային համար եւ իրենք շահագրգռուած չեն ստարկայ, բայց ոչ մտածող ու զգայող էակ, որ պէտքովն արակուս երիտասարդութիւնը զօրանցներու մէջ տարիներու ընթացքին բացարձակ հնազանդութեան կը դատարարակէ. միայն «ազգային» պոթութեամբ օրէնքին սակ կարելի է որ ազգի մը սեփական լեզուն յաջողակեան, անոր օտար մը ստիպելով եւ այդ ամենը յանուն կուտուրայի, զորն որ այդ կերպով կը բռնաբարեն ու կուրանան:

Ընկերակցական աշխարհահայեցողութիւնը այդպէս «կուտուրայ» չի ճանչնար, որուն իրականացման համար մայրական լեզուն յաջողակութեամբ հարկաւոր ըլլար:

Ընկերակցականութիւնը բնաւ ազատութիւն մը չի գտներ այն տեղ, որ ամբողջ ազգեր կը նուաճեն ու կը ճնշեն: ան սեփական երջանկութիւն մը չը գիտէ զոր ուրիշին վիշտով խառնուած ըլլար:

Ընկերակցականութեան հարցը, որ ընթացիկ դասակարգի գեղմ կուրկը քարոզեն, իրաւունք չունին մայրական լեզուն արգելուել, ինքնավճարութեան իրաւունքի մերժումը եւ ուրիշ ազգային կուտուրայի ճնշումը հաստատելու:

Եթէ բուրժուական ազգային պետութիւն մը միայն արիւնով ու երկաթով, միայն «ժառանգական թըշնամու» ուսքի տակ սարով կարելի էր, ապա ազատ ազգ՝ իրենք ընկերակցականութեան մը իտեպը միայն այն տեղ կարելի է, որ ժառանգականութեան չէ կարող գոյութիւն ունենալ, որ նախկին արիւնակցութեանց հետքերն անգամ չըքայտնեն, եւ ուր վերջապէս ժողովրդական աստիճանները տկարացած եւ անգոր է այլեւս: Ան հին ճշմարտութիւն մըն է, որ ճնշումը՝ թէ ճնշողին եւ թէ ճնշուածին միանգամայն կը վնասէ:

Զօրաւոր Անգլիան իր լանտացիներով կը տառապի, Ռուսաստանը Լեհացիներով ու Ֆինլանտացիներով եւ Եմաններու հոյակապ ժողովուրդը սեւ հարցով կը հիւժի:

Բաղադրագոյններ կան եւ այն մեր շարքերուն մէջ ալ, որոնք քանի մը ժողովուրդներ ինչպէս եւ ամբողջ հասարակութիւններ, միմիայն արեւմտեական աստիճանով ինկատի կառնեն ու բոլոր միւս տեսակէտները իրենք անձեռք կը մերժեն:

Շատերու աչքին այդ պէտք է ըլլայ. «Ընկերակցական աշխարհահայեցողութեան» անհնարիտ հետեւողութիւնը:

Սակայն այդ հայեացքը, որ բուրժուական դրամատիքական պետութեան մը կազմութեան շարժարկը կը կրէ, ուրիշն բնաւ պիտի չըմբռնէ: ան ժողովուրդի մտքաւոր ազատութեան համար, ձգտում մը ոչ պիտի ընեն ձեռնարկութիւն եւ ազգային ու եւ ճնշման թօնախառնը իր վզէն: Իրապապ աշխարհահայեցողութիւնը, զոր այսօրուայ ստիպութեան դաստապարտեցած պրոլետարիւն, ընկերակցական հասարակութեան մը ոսկի ապագան ցոյց կուտայ, միթէ կարող է այդ ապագան ազգային ստիպութեան հետ կուրկուցել: Մենք երբէք չենք կարող հասնիլ թէ ինչու համար այսքան լրջամտ վարդապետութիւն մը, ազգային եւ զանազակէ մը յաղթանարուած պէտք է խաթարուի:

Ինչու համար պրոլետարի բարոյական, կրօնական, քաղաքական եւ ընկերական ստիպութեան համար մղած կուրկն հետեւ չի միացնէ ազգային ազատագրութեան կոչումը: Ինչու համար պէտք է որ այդ կուրկը «բան մը ըլլայ» որ ընկերակցականութեան մը անարժան ըլլար:

Անոր համար, վասնոր պահպանողականներն ու քաղաքացիներն ալ «ազգային» են:

Սակայն միեւնոյն պարագան պատահած է քաղաքական կուրկ ժամանակ: «Մարդկային իրաւունքը» հրահանգը սյուն ամենայնէ երրորդ վիճակն է:

Ծիրք այդ պէս պատահած է կրօնական ստիպութեան դէմ մղուած հակազդեցութեան հետ. պրոլետարիատը ուրիշներու սկսած գործը առաջ կը տանի: Այդ պատճառով ազգային գործունեութեան դրողունը ընկերակցականութեան հետ կապուած չի կարող զարգացնել զանազան միայն ու այն սկզբունքը կը հետպահան, այնքան անհիմն է որքան անհիմն կը լինէր կասկածել եթէ որոշ պարագաներու մէջ պրոլետարիատը բնակչութեան միւս խաւերուն հետ միասին ընդհանուր շահերու համար ձեռնարկէ: Այս ընդհանուր փաստերը պարսկի ցոյց տայ, որ ընկերակցականութեան իրաւունքը գէշի ազգային նպատակներն ու ինքիները երբէք օտար եւ անտարբեր չի պէտք է հանդիսանայ: Ընդհակառակը, նա պէտք է քաղաքացիական իտեպըներու մարտերը հակադրապառակտալ տառապանի, այնքան հեռու, որ «միայն ազգային» քաղաքացիութիւնը չի կրօնայ ետեւէն հասնիլ:

Եթէ այս առիթով քանի մը գիտողութիւններ ալ Պրուսիայ մէջ տիրող ազգային յարաբերութեանց մասին ընել ինձ թոյլ տամ, այդ կը լինի միայն բողոքական ընդհանուր սահմաններու մէջ եւ այն փոփոխով, որ Պրուսիան եւ Լեհ հասարակութեան միջեւ շուտով անազարտ միութիւնը եւ պայծառ հակազդեցութիւնը տիրապետէ:

Ծիրքիս Չառեն (Շարունակելի)

### ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայ Մասնաւոր Վարժարան Փ. Պոլիս

Միութարական երեւոյթ մը: Երեսներէ շատեր իրենց զուակները արձանագրել տեսած ասին, որ ասին ենք որ, ընդունելութեան պայմաններէ զատ՝ վարժարանի մասնակցութեան կազմով ու ծրագրով եւս կը նետաքրքրուին: Այդ մասին մեզ եղած հարցումներու ընդհանուր կերպով պատասխանելու եւ շատերու յարկաբան գոհացում տեսած ըլլալու համար, պարտք համարեցինք ներկայս հրատարակել:

Կայս հրատարակել:

Վարժարանի նպատակն է կարեւոր ուսումնարան անհրաժեշտ եւ հիմնական ծանօթութեանց պատշաճ մը տղաքը կեանքի պատրաստելէ զատ, զանոնք ընտիր քաղաքացիներ, ազգի լաւ անգամներ ընել: Այդ նպատակին հասնելու համար մշակուած է նախնական եւ երկրորդական կրթութեան (Անտիլեանս քոլեճիէ եւ սոցիալիստիկ գիծերուն մէջ անփոփոխ կը մնայ եւ որու մէջ աղուն ֆիզիքական, մտաւոր ու բարոյական կրթութիւնները իրենց յատուկ տեղը ունին, այնպէս որ անոնք ներգաղանթիւն մը կը կազմեն եւ զիրար կ'ամբողջացնեն:

Ֆիզիքական կրթութիւնը հիմնականում տրուած ասուր ու բարոյական կարծութեանց զարգացման, մեր ուշադրութեան գլխաւոր առարկան ըլլած ենք զայն: Այդ կրթութեան համար մեր ձեռք առած միջոցները կրկին նպատակներու կը ձգտին, նախ աղուն մարմինը առողջ ու զօրաւոր պահել, երկրորդ՝ անհատականութիւնը ու ժողովները: Մարմնամարզի հիմնական վարժութիւններէ զատ, գիտական դասերու միջոցաւ աշակերտներու կը տրուի իրենց հասակին համեմատ անողական կարեւոր ծանօթութիւններ, ամէն օր խիտ հակողութիւն կը ըլլայ տղայոց մտքութեան, մեծ կարեւորութիւն տրուած է արդէն չէնքի ընտրութեան, զաւարաններու լուսաւորութեան եւ զբանգաններու նոր ու առողջապահիկ կազմութեան:

ՄՏԱՒՈՐ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ համար նըպատակ դրուած է անհրաժեշտ համարուած ուսումներու ծանօթութիւնները հիմնական կերպով սովորեցնելը, առանց տղայոց միտքը ծանրաբեռնելու եւ խճողելու: Այս կրթութեանը աշակերտը լիտի ստանայ կեանքի մէջ անհրաժեշտ եղող ծանօթութիւնները, բայց մանաւանդ այդ ծանօթութիւններու միջոցաւ պիտի կարենայ իր մտաւոր ու հոգեկան կարողութիւնները մշակել եւ զարգացնել: Վարժարանիս ուսումնական ծրագիրը մեր կեանքի պայմաններու յարմարեցուած է, աչքի առաջ ունենալով նաեւ պուրկարական ու երոպական ուրիշ ազգերու դպրոցական ծրագրերը, եւ այնքան ուսում կը պարունակէ որ, մեր բնաւարտները կարենան կեանքի մէջ գիրք մը գրաւել, կամ բարձրագոյն վարժարաններ մտնել: Այս տարի արդէն պիտի կարան կիսազրիտի Ա. եւ Բ. դասարաններու աշակերտներ տեսած ենք:

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ մեզ համար միւս կրթութեանց հոգին, աւանդուած բոլոր դասերու ազնուութիւն եւ վերացում տուող բանն է. մարմին, մտքի եւ հոգեւոր կարողութիւնները անով միայն կը ներգաղանթուին: Կրօնքի եւ բարոյագիտութեան մասնաւոր դասերէ զատ, պատմութիւն եւ ուրիշ ուսումներ. ինչպէս նաեւ վարժարանիս ՏԻՍԻԲԻԼԻՆԻ ընդհ. ոգին, ուղղակի կամ անուղղակի կերպով տղայոց բարոյական կրթութիւնը տալու կը ձգտին:

Վարժարանիս ունի ճիշդ ֆրոպէլեան գրութեամբ մանկապարտեզ մը իր բոլոր կարեւոր կազմ ու կազմութեամբ: Այդ հաստատութեան մէջ այս տարի 30 աշակերտ աւելի չենք բնորոշիր, միայն այդքան հոգիի համար իրենցներն ունենալուս պատճառաւ:

Նախնական կրթութեան համար երեք, իսկ միջնակարգ կամ երկրորդական կրթութեան համար երկու դասարան ունինք, նախնական կրթութեան գաւառները երկսեռ են, իսկ երկրորդական կրթութեան կարգերու աղջիկ եւ մանչ աշակերտները իրենց առանձին դասարանները ունին եւ զատ դաս կաննեն:

Մեզ եղած հարցումներու այսպէս ընդհանուր կերպով պատասխանելու լի օգտակար համարեցինք, քանի որ ըստ ընդունուած սովորութեան ծրագրի համար ծանօթ ՈՒԹԻՒՆՆԵՐԻՍԻԹԻՒՄ արկուտով պիտի չը կարենայինք զարոյցի ոգին եւ ուղղութիւնը բացատրել:

Վարժարանիս անցեալ տարուան ծրագիրը անփոփոխ կերպով պիտի զորոգրուի նաեւ այս տարի: Ուսուցչական մարմինն ալ որ եօթը միայն վարժուհիք եւ վարժապետք կը բաղկանայ, նոյնը կը մնայ, միայն Տ. Զօրեանցի տեղ նոր պաշտօնակից մը պիտի աւանանք որ Սեպտեմբերի մէջ հոս կը սպասուի:

Աւելորդ չէ յայտնել թէ՛ ինչպէս անցեալ տարի, այս տարի եւս ուժ սուցչական մարմինը որոշած է կարգ փոխելու համար աշակերտները հրապարակային քննութեան չենթարկել, ուստի պարտք կը համարի այժմէն հրաւիրել ծնողներն ու պաշտպանները որ տարւոյն, ընթացքին մէջ վարժարանի այցելելով զորոնականապէս ցոյց տան իրենց դպրոցով հետաքրքրուելու եւ անձամբ ծանօթանան աշակերտաց վիճակին:

Կը յուսանք թէ՛ ծնողներն ու հետաքրքիր հասարակութիւնը այսքան ծանօթութեամբ պիտի գոհանան: Աւելի մանրամասն տեղեկութիւններու համար կը խնդրուի, գիծել վարժարան:

ՀԱՅ ՄԱՍՆԱՒՈՐ ՎԱՐՇԱՐԱՆԻ Ուսուցչական Մարմին

Մանօթ. — Օտար քաղաքներէ երբ բաւական թուով աշակերտ ունենանք, մտադիր ենք ԲԱՆՍԻՆԻՆ մը հաստատել, իրենք մէկ ճիւղը մեր հիմնարկութեան:

### ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

(Այլաբանութիւն)

Շար. Ասիտոյ քիւիկ եւ վերջ

Ազգ. դպրոցը օրէց օր հսկայաքայլ կը յետագիւմէր, ազատ ճանապարհ բանալով թշնամի դպրոցներու յառաջանալու, որոնք ժամանակի մը մէջ հայ սաներով լեցան: Իսկ ցաւ մըն էր հայ ծնողքին համար. օտարին գիրկը յանձնել իր զաւակները, բայց իրողութիւնը սա էր որ Ազգ. կրթարանը փակուելու ատիճանին էր հասած շնորհիւ Միւս պատուելիին, որը գեաւ կերպէր ապագայի ուսուցչականութեան հոսանքը սուր հանգամանք ստացած կ'այառնար մահացնել հասարակութեան էն լաւ ջեղերը ոչ մի զգայուն անձի մը համար:

հանգուրծելի չէր այս կացու- թիւն . երկասարդ ատենն կու- լային տեսն լով վրուչումը բա- րոյական շէնքի մը , որը երկար տարիննրու անհուն զոհողու- թիւններ հազիւ կրցեր էին ձեռք բերել :

Մի օր սակայն Ա...ի ժողովուր- գը ակահատեար կը լինէր մի մեծ հրդեհի որը երկու մեծ կր- թական հասարակութիւններ իր բոցերուն մէջ առած , լափլղելով կը փճացնէր արագ . արագ... յաջորդ օրը որ այլ եւս չէնքերու տեղ աներակներ միայն կը տես- նուէին , և փլատակի մը կողքին բարձրացած սիւնի մը վրայ կը կարգացուէր հետեւեալ արձա- նագրութիւնը . «Դադարեցուցէք ձեր արշաւանքը հայ դպրոցին դէմ . մահ թշնամիներուն» . . . .

Իսպարձակ կռիւ մ'էր որ կը յայ- տարարուէր հակառակորդ սար- րերուն դէմ . . . . թշնամիներու նահանջը ամենամեծ հաւանակա- նութիւնը կը ընծայէր . նոր փայլ մը տալու Աղգ . դպրոցին , եթէ սակայն այդ երէկի շահատակնե- րու տեղ Ասում . խորհուրդը նոր պաշտօնեաներ զրկելու փոյ- թը ընէր . ինչ որ թէ նիւթայէս և թէ բարոյայէս օգտակար պի- տի լինէր . այլ ցաւալին , այն զբաղուած ծրագրական ներքին խնդիրներով . ձգեց որ տպաու- րութիւնները պաղին , անբարո- յութեան հոսանքը գայ տիրապե- տելու կրկին՝ հրապարակի վրայ . թողուց իրերը իրենց անիշխան վիճակին մէջ (գիտէք ի՞նչու , որ պէտքի պատուելիին այսինքն անցեալի մեծ դէմքերէն միայն խաթրը , սիրաը չի վերաւորուի , յետոյ սրովհետեւ այն շրջանի մէջ , գործելու լիազօրութիւն տուած ըլլալուն , ամօթով չի մնային իրենց մեծ սխալին վը- րայ . . . ) եւ այսօր Ա...ի շրջանը ի զուր կսպասէ նոր կարգադրու- թիւններու . . . .

Իրողութիւններու այս երկար շարքին մէջ ընթացողը երկու հակառակ տպաուրութիւններ պիտի կրէ , խորունկ զայրոյթ մը , որ կը յառաջանայ արդարու- թիւնը կոխտուած տեսնելով . լայն կակիծ մը , որ կը ծնի ժո- ղովորդի ապագան իրենց ձեռնե- րուն մէջ պահող մարմինն . րու անտարբեր ու կամայական ըն- թացքէն - հակասութիւններու երկու շարք՝ որոնք կեանքը սխալ ըմբռնելէ կը ծագին . ա- նոնց համոզումն ու օրէնքն է .

Նախ՝ ուսուցիչը ամենայն դէպս իրմէ բարձր մարմնի հրամանին պարտի անպայման կերպով հնա- ղանդի , նոյն իսկ եթէ այն ա- նարդար լինի .

Երկրորդ ժողովուրդը պէտք է իր քուէով ընտրածներու ? ? ? բո- լոր արարքներուն համակերպի ,

քանի որ նոյն ինքն իրաւասու- թիւն կուտայ իրեն ազատօրէն գործելու :

Եթէ նոյն ընտրելեաց մարմի- նը շարաշար գործածելով հան- րութեան վստահութիւնը սխալ ու անհաշիւ քայլեր առնու , ո- լոնք գործի տեսակէտէ զրդու- լով փաստաբեր են համայնքի շա- հերուն , չը պէտք է բողոքուի անոնց դէմ . քանի որ սոյն գոր- ծողները ժողովրդի մակարդակէն բարձր են ? ? ? Եթէ զինք ընտրող ժողովուրդը իր մէկ արարքին պէմ բողոքէ և մերժէ ընդունել անոր որոշածը , իբրեւ անիրաւ ու ապօրէն ինչ . պէտք է գլուխ բերէ ի՞նչու , որովհետեւ պաշ- տօնանկութիւնը կը ներկայաց- նեն և անսխալելի են . . . . և նը- ման պարագաներ որոնք աւազ շատ կը կրկնուին մեր հրատա- կական կեանքի մէջ :

Մինակ ուժ մը որ կարող է գի- մագրաւել ու հակադրել այդ տը- խուր իրողութիւններուն վրայ , դա ժողովրդի գիտակից երկու- սարգութիւնն է որ չը պէտք է թոյլ տայ նման ցաւալի ու անար- դար արարքներու կրկնութեան և իր ձեռննէրէցութեամբ մաքրէ հրապարակի իրենց կոչումին անգիտակից մարդիկները որոնք քանի մնան այնքան համայնքը կը տուժէ :

Հրայիրկրոդ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Մ

Սուլթանը Թուրքիոյ Սեւ ծո- վի նաւահանդիստներու իշխա- նութեանց հրամայեք է լաւ ընդու նելութիւն ընեն Ռուսական նաւատորմի ինչ :

— Պուսէն կը հազորգեն թէ ռուս իշխան Տօլկոբուքին կանգ- նած ըլլալով Իերա Պալատ օթէլի պատուհանին առջեւ , գնդակ մը քիչ մը իրեն դպչելով կանցնի : Այդ մասին քննութիւններ ըս- կուած են :

— Աւստրիական թերթ մը կը հազորգէ որ իրենց հիւպատոսա- ներու առած տեղեկութիւններու համաձայն հրոսակախմբու շար- ժումները շատցած են վերջերս մգնաւանդ Պիթօլիա նահանգին մէջ . և ամբողջ Մակեդոնիան վը տանդուոր կացութեան մէջ է :

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Մ

Մակեդոնական վերջին խոռ- վեցուցիչ լուրերու առթիւ Մարա- Փօլիտաներու Ի . կոմիտէի նախա- զահ Պ . Սթանիշէֆ շրջաբերական հեռագրով մը կը հազորգէ մաս- նահանգներուն հետեւեալը .

«Մակեդոնիոյ կացութիւնը ան-

ընակուն է , ինչպէս եղած է մինչեւ օրս : Ապստամբութիւն չը կայ- շուտով շրջաբերականներ կընդու նիք» :

— Երկրայի հանդէսները վեր- ջացան . թէ Նիքոլա իշխանը և թէ ռուս զօրավարները շատ գոհ մնացեր են պուլկար զինուորնե- րու վիճակէն և պուլկար ժողո- վուրդի ընդունելութենէն . Իշ- խան ֆէրոսիանա և Նիքոլա իշ- խանը զգայուն ճառեր արտասա- ներ են :

Նիքոլա իշխանը հանդէսներէն վերջը իսկոյն Պօլիա մեկնեց է , ուր Սուլթանը փառաւոր ընդու- նելութիւն մը կը պատրաստէ Սան Սթեֆանօ հասնող յաղթական իշ խանին զուակին հ մար :

Ռ Ո Ւ Ս Ի Մ

Ելեւմտից նախարար Վիթէ մեկներ է դէպի Մանչուրիա , ո- րովհետեւ Սիպերիոյ և Մանչու- րիոյ երկաթուղիին շինութեան միջոցին մեծ զեղծումներ կատա- րուեր են : Նախարարը անձամբ կուզէ քննութիւնները կատարել և յանցաւորները գտնալ :

— Ռուս ուսանողներուն մէկ մասը ուղերձ մը մասուցեր են նախկին կրթական նախարար Վանովաքիի օր արամագրութիւն ունէր դպրոցական աղատ օրէնք- ներ հիմնելու :

— Ռուս մամուլը խօսելով Պուլ- կարիոյ մէջ տեղի ունեցած հան- դէսներու մասին կը յայտարարէ որ այդ հանդէսները բոլորովին քաղաքական նշանակութիւն չու- նին :

ՅՐԱՆՍՍ

Հռչակուոր գրագէտ Էմիլ Զօ- լան ամառանցէն կնոջը հետ Բա- րիզ վերադառնալով , նոյն գի- շերը հեղձամահ եղեր է վա- ռարանի մէջ վառուած ա- ծուխի արտադրած թունաւոր գաղէն : Կինն ալ հազիւ աղատ- ուեր է և դեռ հինանդ վիճակի մէջ կը գտնուի . Մանրամասնու- թիւնները միւր անգամին ա- ռանձին յօգուածով կը հազոր- գենք մեր բնթերցողներուն :

— Կառավարութիւնը կղերին պայ տօնապէս ազդարարեր է որ մի- այն ֆրանսերէն լեզու պէտք է գործածել քարոզներու , կրօնա- գիտութեան լրատներու , հոգուա- կան թուղթերու և ուրիշ եկեղե- ցական վաւերաթուղթերու մէջ :

ԱՄԵՐԻԿԱ

Նախագահ Ռուզվելթ անկողնոյ կը ծառայէ որովհետեւ կառքէն իյնալէն վերջ քանի մը օր լիտոյ պարտաւորուեցաւ սաքին իրայ բժշկական գործողութիւն մը ը- նել տալ :

ԹՈՒՆՍԻԱԼ

Ժնէվէն կը հազորգեն որ Օ- րանժի նախագահ Շթէյնի առող- ջական վիճակը ծանր է : — Լորտ Չէմպրլէն կը հերքէ Թրանսլալի պարտքին համար նոր տուրքերու մասին եղած զը- րոյցները :

« Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք »

Աղգային և քաղաքակ մն Երաթաթաթերթ  
Կը հրատարակուի շաբաթը մի անգամ Պօսթընի մէջ  
Բաժնեկիւնն է արտասահմանի համար տարեկան 10 ֆրանք . Գիմել հետեւեալ հասցեով  
61 Էստէս Սոր . Գօրոն Մաւ (Ի . Ս . Ա . )

ԿԱՉՄԱՔԱՐՏՈՒՆ «ԲԱՅՅԻ»  
Վառնաուրիցա «Երկրային»  
Կը կազմուի խնամքով ամեն տե- սակ գիրքեր , տարակներ ու վա- ճառակահական ստաւներ .  
Յանձնարարութիւններ կընդու- ուին և կը կատարուին շուտով : Ա- շակերտներու և աշակերտահներու համար մասնաւոր դեղջ .  
Յ Ս Յ Տ Ս Ր Ս Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

«ԲԱՅՅԻՆ ՍԻՆԻՆ» ընթերցարանի մէջ կը ծախուի Ատոմ Երանանանի «Իլլյուզիոնի» ի նպատակ հայ Ու- սանողական Միութեան :  
Գինն է 1 լէֆ արծաթ :  
Կը ծախուի նաեւ «Երկրային Ազա- տութեան Զանապարհին» :  
Գինն է 90 սանթիմ  
Վառնա

ՅԵՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Սկսու հրատարակուի Թրանսլի նշանուոր վիպասաններէն Լուի Նուա- ոլ :

ԱՆԻԾԵԱԼ ՊԱՆԴՈՒԿ

Վերազանցապէս հետաքրքրաշարժ Ամէն դասակարգի գիւրամատչելի ըլլալու համար վերքը երկու մասով երեւան պիտի ելլայ (մէկ հատորի մէջ) և ամբողջութիւնը 52-54 թեր- թերէ պիտի բաղկանայ :  
Իւրաքանչիւր մասին բաժանորդա- գինն է Վառնայի համար 1 25 . ուրիշ քաղաքներու և արտասահմանի 1, 50 . իսկ ամբողջութեանը բաժնեկիւնն է . Վառնայի համար 2, 50 . և Վառնայէ դուրս 3 ֆր . ձեռքէ առնողները պի- տի վճարին առաջուան պէս՝ 8 երես- նոց պրակին՝ 5 սանթիմ :

ՍԱՆ քաղաքները և կամ գիւղիք ուր մէկէ աւելի բաժանորդ ունենք :  
միայն մէկ հասցէի ամէն շաբաթ եր- կու պրակը մէկ ծրարով պիտի զրկուի . իսկ առանձին բաժանորդի պրակները 6 հատը մէկ ծրարով պիտի զրկուի . փոսթի ծախքը հրատարակչին վրայ է :  
Փափաքողները պէտք է դիմեն հե- տեւեալ հասցէին :

Փոնիկ Parseghian  
Imprimerie Orientale, Varna  
Իրաւի փոխառնեւ անսխալորով ալ կընդունուի .

Отговорникъ  
Мурадъ-Браносянъ  
Печатница „Верапостъ“ Варна.